ԿԱՐԾԻՔ

ԿԱՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ ԲԱՅՐԱՄՅԱՆԻ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՀՊԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ատենախոսությունը նվիրված է Աշխարհբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությանը, ում անձնուրաց ջանքերի շնորհիվ փրկվեցին բազմաթիվ հուշարձաններ: Նրա անունը սերտորեն կապված է հատկապես Անիի հետ, երբ իր նվիրումի շնորհիվ կարողացավ փրկել Անիի պեղումներից հայտնաբերված շուրջ 6000 հնագիտական իր: Նմանօրինակ անհատների կյանքն ու գործը պետք է ուղենիշ հանդիսանա հատկապես երիտասարդ սերնդի համար: Հուշարձանների պահպանության ոլորտում այն հիմքերը, որոնք դրվեցին 1919-1920թթ. Աշխարհբեկ Քալանթարի անմիջական մասնակցությամբ, որոշ դեպքերում նաև գլխավորությամբ, հանդիսացան այն խարիսխները, որոնց վրա հետագա շրջանում պետք է բարձրանային Հայաստանի հուշարձանապահպանության տարբեր սյուները:

Եթե 20-րդ դարասկզբին քաղաքական, սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում, գաղափարական հակադրության իրավիճակում, ֆինանսական սուղ միջոցներով նման անձինք կարողացել են իրենց նվիրումի շնորհիվ փրկել բազմաթիվ հուշարձաններ, ապա այժմ հուշարձանների ուսումնասիրման ու պահպանության ոլորտում ներգրաված մարդիկ պարզապես պետք է անեն հնարավորը՝ մեզ հասած ժառանգությունը հավուր պատշաճի խնամելու և հաջորդ սերունդներին փոխանցելու համար:

Դրվատելի է, որ ատենախոսության շրջանակներում շրջանառության մեջ են դրվում բազմաթիվ փաստաթղթեր, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվում: Կարևորում ենք նաև հեղինակի պրպտումները, որոնց արդյունքում բազմաթիվ տեղեկություններ նա կարողացել է քաղել Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի արխիվի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղից: Ատենախոսը մանրամասն ուսումնասիրել է նաև Աշխարհբեկ Քալանթարի թողած գիտական ժառանգությունը,

որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են վերջինիս կյանքի և գործունեության տարբեր շրջափուլերի լուսաբանման համար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից, որտեղ ատենախոսը ներկայացրել է թեմայի հետ անմիջական առնչություն ունեցող արխիվային փաստաթղթերը:

Առաջաբանում ներկայացված է թեմայի ուսումնասիրման կարևորությունը, գիտական նորույթը, մեթոդաբանությունը, աղբյուրագիտական հիմքը, որը հեղինակի մոտ լիովին հաջողվել է:

Առաջին գլուխը վերնագրված է «Աշխարհբեկ Քալանթարը Հայաստանի հուշարձանների պահպանության ակունքներում» և բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում հեղինակը բծախնդրորեն անդրադարձել է Աշխարհբեկ Քալանթարի ուսման տարիներին և հատկապես առաջին քայլերին որպես հնագետ և վիմագրագետ՝ ընդգծելով Անիի պեղումների դերը հետազոտողի կայացման գործում:

Երկրորդ ենթագլխում ներկայացված է Աշխարհբեկ Քալանթարի գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին: Հեղինակը դիպուկ է նկատում, որ նրա ջանքերի շնորհիվ է հնարավոր դառնում հուշարձանների պահպանության ոլորտում կարևորագույն խնդիրների կանոնակարգումը:

Երկրորդ գլխում ատենախոսը ներկայացրել է Աշխարհբեկ Քալանթարի գործունեությունը Խորհրդային իշխանության տարիներին: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցից առաջինում ատենախոսը հանգամանորեն քննության է առել Աշխ. Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը 1921-1924թթ.: Հարկ է նշել, որ ատենախոսի կողմից անդրադարձը այդ տարիների գործունեությանը լիովին հաջողվել է: Առավել հաջողված է երկրորդ ենթագլուխը, որտեղ ատենախոսն անդրադարձել է Զվարթնոցի պատմահնագիտական վայրի կայացման գործում Աշխ. Քալանթարի անուրանալի դերին: Նրա շնորհիվ ոչ միայն ֆիզիկապես փրկվեց Ներսես կաթողիկոսի կառուցած նշանավոր տաճարը, այլև կայուն հիմքեր դրվեցին հուշարձանի հետագա ուսումնասիրությունների համար:

Երրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջինում հեղինակն առանձնացրել է Աշխ. Քալանթարի գործունեությունը 1925-1929թթ.: Երկրորդ ենթագլուխը նվիրված է 1930-1936թթ. Աշխ. Քալանթարի պայքարին ընդդեմ հուշարձանների ֆիզիկական ոչնչացման: Այստեղ ատենախոսը մանրամասն կանգ է առել հատկապես Երևանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու շուրջ ծավալված իրադարձություններին: Աշխ. Քալանթարի համառ ջանքերը՝ կործանումից փրկելու Երևանի պատմության այդ նշանավոր կոթողը, հաջողություն չունեցան, և ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, նա. «չհաշտվեց Պողոս-Պետրոսի ոչնչացման փաստի հետ և ամեն առիթով արտահայտում էր հոգում օրավուր զորացող խռովքը»: Ատենախոսը դիպուկ նկատել է նաև, որ «Աշխ. Քալանթարը իր կարճատև կյանքի ընթացքում հասցրեց կատարել մարդկային մի քանի կյանքին հավասար գործ՝ աշխատանք, որի պտուղների ականատեսն է ներկայիս սերունդը»:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որոնց բովանդակությունը լիարժեք պայմանավորված է նյութի շարադրանքի կուռ տրամաբանությամբ և բոլորն էլ հիմնավորված են:

Բարձր գնահատելով այս աշխատանքը՝ միաժամանակ ունենք որոշակի դիտողություններ, որոնք, կարծում ենք, կօգնեն հեղինակին իր հետագա ուսումնասիրությունների ընթացքում.

- Աշխ. Քալանթարի ահռելի աշխատանքը առավել պատկերավոր կլիներ, եթե հեղինակը քարտեզի տեսքով ներկայացներ այն կարևոր հուշարձանները, որտեղ գիտնականը գործունեություն է ծավալել:
- Գովելի է, որ հեղինակը առանձին ենթագլխով (2.2) անդրադարձել է Զվարթնոցի՝ որպես պատմահնագիտական վայր կայացման գործում Աշխ. Քալանթարի ներդրած ջանքերին: Կարծում ենք, սակայն, որ հեղինակը պետք է հակիրճ անդրադառնար նաև Աշխ. Քալանթարի կողմից Զվարթնոցում իրականացված պեղումներին, որի արդյունքում ոչ միայն հայտնաբերվեցին նորանոր փաստեր հուշարձանի ժամանակագրության վերաբերյալ, այլև հստակեցվեցին Վաղարշապատ քաղաքի սահմանները՝ առ այն, որ դրանք հասել են Հռիփսիմե եկեղեցու շրջակայք և չեն ընդգրկել Զվարթնոցը:
- Էջ 71-ում հեղինակն անդրադարձել է 1922թ. հոկտեմբերի 17-ի հանձնաժողովի եզրակացությանը՝ Զվարթնոցում իրականացրած նախնական դիտարկումների

վերաբերյալ, ըստ որոնց «... պատմական Կայնեպոլիս-Վաղարշապատ քաղաքի միակ հավանական տեղը Զվարթնոցի շրջակա տարածությունն է»: Սակայն, մեր համոզմամբ շահեկան կլիներ, եթե հեղինակն անդրադառնար նաև Ա. Քալանթարի կողմից հետագա տարիներին Զվարթնոցում իրականացրած պեղումների արդյունքներին և համապատասխան եզրահանգումներին: Մասնավորապես, այս հարցադրումների պարզաբանմանն էին միտված 1931թ. կազմակերպված հնագիտական աշխատանքները (պաշտոնական ղեկ. Ն. Մառ, անմիջական ղեկ. Ա. Քալանթար): Արշավախումբը բաժանված էր չորս առանձին ջոկատների. ղեկավարներ՝ Թ. Թորամանյան, Ս. Տեր-Հակոբյան, Ս. Տեր-Ավետիսյան, Աշխ. Քալանթար: Հետախուզական պեղումների արդյունքում հստակեցվեց, որ երևացող բլրաշարքերը (ըստ նախնական կարծիքների դրանք Վաղարշապատ քաղաքի պարիսպներն էին) կուրգանային դամբարաններ են և կապված չեն Վաղարշապատ քաղաքի հետ: Արդյունքում պարզվեց, որ Վաղարշապատ քաղաքը հնում ևս տարածվել է իր այժմյան սահմաններում և Հռիփսիմեից Զվարթնոց ընկած տարածքում եղել է հին և անտիկ շրջանի դամբարանադաշտ[1]:

- էջ 83-84-ում ատենախոսը մանրամասն անդրադարձել է Դվինում պատահականորեն հայտնաբերված «Արքայի արձանի գլխին» և հղել 1925թ. «Խորհրդային Հայաստան» թերթը: Կարծում ենք, հետաքրքվողների համար շատ ավելի հասանելի կլիներ, եթե հեղինակը հղեր նաև Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած Հայաստան. Քարե դարից միջնադար ժողովածուն, որտեղ արտատպված է նաև վերոնշյալ հոդվածը [2] : Իսկ արձանի գլխի թվագրության, պատկերագրության և զուգահեռների համար կարծում ենք արժեր հղել Բաբկեն Առաքելյանի մենագրությունը[3]: Նույնը վերաբերում է և Ջանֆիդա գյուղում հայտնաբերված սեպագիր արձանագրությանը[4]:
- էջ 93-ում հեղինակը նույնացրել է Կապույտ և Սարդարի մզկիթները՝ ներկայացնելով «Երևանի Կապույտ կամ Սարդարի մզկիթի մասին»: Նշենք, որ Սարդարի կամ Արբաս Միրզայի մզկիթը, որից այժմ ոչինչ չի պահպանվել, գտնվում էր Երևանի բերդի

---

[1]Աշխարհիբեկ Քալանթար, Հայաստան. Քարե դարից միջնադար, երկերի ժողովածու, Գիտական ժառանգություն, հ. 4, Երևան, խմբ. Ա. Քալանթարյան, «Գիտություն», 2007, էջ 317-355:
[2]Աշխարհիբեկ Քալանթար, Հայաստան. Քարե դարից միջնադար, էջ 227-228:
[3]Բ. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության (մ.թ.ա.VIդ.-մ.թ.IIIդ.), Երևան, 1976, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 17:
[4] Աշխարհիբեկ Քալանթար, Հայաստան. Քարե դարից միջնադար, էջ 247-253, Арутюнян Н.В., Корпус Урартских клинообразных надписей, Ереван, 2001, N 276:

տարածքում: Մզկիթը կառուցվել է Երևանի վերջին սարդար Հուսեյն Դուլի խանի կողմից՝ որպես պալատական գլխավոր մզկիթ և անվանակոչվել Պարսից թագաժառանգի Ֆաթհ Ալի շահ Դաջարի որդի Աբբաս Միրզայի պատվին: Իսկ ահա Կապույտ կամ Հուսեյն Ալի Խանի մզկիթը այժմ գտնվում է Մաշտոցի պողոտայում և ՀՀ գործող միակ մզկիթն է[5]:

- Ներկայացվող նյութն առավել փաստարկված կլիներ, եթե ատենախոսը հավելվածում առկա փաստաթղթերը ներկայացներ բնօրինակների պատճենների տեսքով, գոնե որոշները:

Նշված մասնակի դիտողությունները բնավ չեն ստվերում պաշտպանության ներկայացված ատենախոսությունը, որը միանգամայն համապատասխանում է Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտ պահանջներին: Սեղմագրում նշված հոդվածներն արտահայտնում են ատենախոսության հիմնական դրույթները, իսկ սեղմագիրը՝ բովանդակությունը:

Ելնելով վերոշարադրյալից՝ միջնորդում եմ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհրդի մեծարգո անդամների առջև Կարեն Սամվելի Բայրամյանին շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին հեղինակը լիարժեք արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս,
պատմ. գիտ. թեկնածու Դիաննա Հրաչյայի Միրիջանյան

Պատմ.գիտ. թեկնածու Դ. Հ. Միրիջանյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
Ինստիտուտի փոխտնօրեն Տ. Ս. Դալալյան

29.05.2024թ.

[5]Լ. Պետրոսյան, Երևան քաղաքի մզկիթները (պատմական ակնարկ), Արաբագիտական ուսումնասիրություններ, N 10, Երևան, 2018, էջ 177-200